



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11- 2
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍԻԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

26.12.2022թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 27 անդամները:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի տեղակալներ Ս.Վարդանյանը, Գ.Գրիգորյանը, համայնքի ղեկավարի գլխ. խորհրդական Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա.Ջաբարյանը, Գ.Աֆյանը, Ա. Ծերունյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար Հ. Շահգալոյանը

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 12 հերթական նիստի օրակարգը՝

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան՝

1. Չարենցավան համայնքում տեղական տուրքերի 2023 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
2. Չարենցավան համայնքում տեղական վճարների 2023 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
3. Չարենցավանի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:
4. Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2023 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
5. Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2023 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
6. Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին:
7. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
8. Չարենցավան համայնքի 2023 թվականի աղբահանության և սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին:
9. Չարենցավան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին:
10. Արսեն Ռոբերտի Սաֆարյանին փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն տրամադրելու մասին:
11. Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին:
12. Չարենցավան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:
13. Չարենցավան համայնքի ղեկավարի տեղակալներ նշանակելու մասին: